

*Շրջակա միջավայրի նախարարության*

*«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

---

*ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ*

*ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*2024*

---

*Հոկտեմբերի երկրորդ տասնօրյակ*

*Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան*

## *ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

*Հոկտեմբերի երկրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում ցածր է եղել նորմայից մինչև մեկ աստիճանով:*




*Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են հոկտեմբերի 12-ին. Տավուշում գրանցվել է +19…+23$^{0}$C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +18...+20$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +26…+28$^{0}$C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +23…+25$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +19…+24$^{0}$C, Շիրակում՝ +20…+23$^{0}$C (Աշոցքում՝ +17$^{0}$C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +18...+21$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +23…+25$^{0}$C, Գեղարքունիքում՝ +16…+20$^{0}$C, Լոռիում՝ +19…+21$^{0}$C, Արմավիրում, Արարատում՝ +27...+29$^{0}$C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +16…+18$^{0}$C, նախալեռներում՝ +22…+27$^{0}$C:*

*Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են հոկտեմբերի 20-ին. Տավուշում գրանցվել է +3…+5$^{0}$C (Դիլիջան՝ -1$^{0}$C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -2…-4$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ 0…+2$^{0}$C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +5…+7$^{0}$C, նախալեռնային շրջաններում 0…+3$^{0}$C, Շիրակում՝ -2…-5$^{0}$C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ -3...-5$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ 0…+2$^{0}$C, Գեղարքունիքում՝ -1…-4$^{0}$C, Լոռիում՝ -2…+1$^{0}$C, Արմավիրում, Արարատում՝ +1...+4$^{0}$C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ -3…-8$^{0}$C, նախալեռներում՝ 0…+2$^{0}$C:*




Տասնօրյակային տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 53-72մմ (398-632%), Լոռիում՝ 51-57մմ (369-487%), Տավուշում՝ 42-57մմ (333-449%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 53-87մմ (465-635%), նախալեռներում՝ 48-53մմ (465-635%), Գեղարքունիքում՝ 32-74մմ (340-851%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 61-69մմ (381-438%), նախալեռնային շրջաններում՝ 53մմ (558%), Արմավիրում՝ 49-56մմ (817-903%), Արարատում՝ 28-44մմ (558-800%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 27մմ (186%), նախալեռնային շրջաններում՝ 31մմ (373%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 4-13մմ (71-113%), նախալեռնային շրջաններում՝ 16-34մմ (150-200%):




Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են հոկտեմբերի 20-ին. լեռնային շրջաններում՝ -2...-5$^0$C, Արարատյան դաշտում, Արագածոտնի նախալեռներում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ -2....+3$^0$C:

*Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ*


















**Գյուղատնտեսական աշխատանքներ և մշակաբույսերի զարգացման պայմաններ**

Տասնօրյակի ընթացքում հանրապետությունում շարունակվել է գյուղատնտեսական աշխատանքները և մշակաբույսերի բերքահավաքը:

Լեռնային շրջաններում շարունակվել է կարտոֆիլի, կաղամբի, փանձի և խնձորի, նախալեռներում՝ պտղատուների, ճակնդեղի:

Որոշ լեռնային շրջաններում որտեղ ցանքը կատարվել էր ավելի վաղ առաջացել է երրորդ տերևը, նախալեռներում՝ հատիկը կտցել է, տեղ-տեղ՝ ծլել:

Հովտային շրջաններում բազմամյա միջին ժամկետներին մոտ սկսվել է աշնանացան ցորենի նախացանքի աշխատանքները, ինչպես նաև շարունակվել է որոշ բանջարանոցային մշակաբույսերի և հնդավորների բերքահավաքը:

Տասնօրյակի ընթացքում դիտված տեղումները բարձրացրել են հողի խոնավության պաշարները:

Սկսվել է աշնանային տերևների գունաթափումը, դաշտերում և այգիներում կատարվել է հերթական վեգետացիոն ոռոգում:

